

ԲԱՌԻ ԱՐԺՈՒՅԹԸ ԵՎ ԴԱՐՉՎԱԾՔԻ ԱՐԺՈՒՅԹԸ

Ա. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Օտտ լեզվաբաններ հենվելով բառի և դարձվածքային միավորի միջև առկա այս կամ այն լեզվական երևույթների ընդհանրությունների վրա՝ դեկավարվում են ուսումնասիրությունների այնպիսի մեթոդներով, որոնք մշակված են բառերի ուսումնասիրության համար: Եվ դա շատ բնական է: Լեզվաբանության մեջ մեծ փորձ է կուտակվել բառերի՝ քերականական, իմաստաբանական և շարահյուսական մակարդակներում ուսումնասիրության համար: Նույնատիպ պրոբլեմների ուսումնասիրության հարցը դարձվածաբանության բնագավառում ծագել է ավելի ուշ: Բառագիտության և դարձվածաբանության բնագավառում բազմաթիվ ընդհանուր կետերի առկայությունը հնարավորություն է ընձեռում օգտագործելու բառերի ուսումնասիրության համար մշակված գիտատեսական մյուսը դարձվածքների ուսումնասիրության մեջ:

Արժույթականության պրոբլեմը, որը ստեղծվել էր հիմնականում բայերի արժույթային կարգն ուսումնասիրելու համար, այժմ լայն տարածում է գտել դարձվածային միավորների կապակցելիության ուսումնասիրության մեջ: Արժույթային կապերի այդ ուսումնասիրություններին են նվիրված թե առանձին լեզվաբանների աշխատությունների ամբողջ բաժիններ և թե առանձին հոդվածներ, որտեղ մենք գտնում ենք դարձվածքի արժույթային կապերի մանրակրկիտ ուսումնասիրությունն ու դասակարգումը, այնպես որ դարձվածքների ուսումնասիրության բնագավառում ընդունվում են նույնիսկ այնպիսի արժույթային դասակարգումներ, որոնք բացակայում են բառի նույնատիպ կապերի ուսումնասիրության մեջ: Որպես օրինակ կարելի է նշել Ի. Գ. Օլշանկու դասակարգումները, որոնք նա բացահայտել է գերմաներենի կայուն բառակապակցություններն ուսումնասիրելիս¹: Մեր կարծիքով հոդվածագիրը նույնացրել է կապակցելիության (согласность) և արժույթ (валентность) հասկացությունները, չնայած որ դրանք նույնը չեն: Բառի կապակցելիությունը շատ ավելի լայն հասկացություն է, քան նրա արժույթը: Ամեն մի կապակցելիություն արժույթ չէ: Նրանց մեջ կա սեռա-տեսակային հարաբերություն: Արժույթականությունը կապակցելիության մի տարատեսակ է, այն կարելի է բնորոշել որպես բառային նշանակության մեջ պարփակված պոտենցիա, այսինքն՝ մի այլ լիմիտ: ստ բառ իրեն կապելու ունակություն: Կապակցելիությունը սեռանիշ է, իսկ արժույթականությունը տեսականիշ հատկանիշ ունի: Կապակցելիությունն ավելի ընդհանրական է, իսկ արժույթն աղելի կոնկրետ: Այն ավելի շուտ հենվում է (թեկուզև ոչ միշտ բացահայտ) կապակցվող բառերի իմաստային հարաբերությունների վրա:

Արժույթականությունը, ընդհանրապես, ընդունված է բացատրել այն բանով, որ տվյալ կառուցվածքային իմաստաբանական նշանակություն ունեցող լեզվական միավորի իմաստը ինքնիրեն չի բացահայտվում, այլ իրականաճում է իր՝ շարահյուսական կապերի մեջ, կամ, ինչպես Տեռնիերը² է ասում, նախադասության մեջ բառի և նրա հարևանների միջև ստեղծվում են կապեր, որոնք էլ որոշում են տվյալ բառի արժույթը: Այսինքն՝ տվյալ անդամը առանձին վերցրած լրիվ չէ, ամբողջական չէ, նրա իմաստը, կոնկրետաճալու համար, պահանջում է լրացում: Այստեղից ակնհայտ երևում է խնդրի երկակի լինելը: Այն միաժամանակ թե շարահյուսական է և թե իմաստային: Կարելի է վստահորեն ասել, որ բառի արժույթը նրա ոչ ամբողջական լինելու հետևանքն է: Կոնտեքստից դուրս բառը, անկարող լինելով ինքնին արտահայտելու ավարտուն ամբողջություն, կարիք ունի լրացվելու մեկ այլ բառով: Մի բառի ձգողականությունը մյուսի նկատմամբ ստեղծում է մի կայուն ամբողջու-

¹ Տե՛ս И. Г. Ольшанский. Валентностный анализ устойчивых сочетаний слов Уч. зап. МГПИИЯ им. М. Торгеза, 1964, вып. 30.

² Տե՛ս L. Tesnière. Éléments des syntaxe structurale, Paris, 1959.

թյուն: Որքան բառը ստորոջական է իր իմաստով, այնքան այն քիչ է կարիք զգում լրացվելու:

Տեսականորեն հնարավոր է համարվում այն, որ բառերը, իրենց ստեղծման նախնական փուլում, յուրաքանչյուրն առանձին վերցրած, իմաստով հագեցված են եղել, և որ շարահյուսական կապերը, ստեղծված բառային խմբավորումների մեջ, ի հայտ են եկել ավելի ուշ: Այդ սկզբնական իրավիճակում անցողականությունը կամ արժույթականությունը բացատրվում են: Բառի առանձին վերցրած լիիմաստ լինելու և հետագայում շարահյուսական կապերի մեջ հաստատվելու գաղափարը տվել է Մ. Բոեալը³, որը հետագայում զարգացրել է Ա. Մեյեն⁴: Մեյեն համեմատելով հնդեվրոպական նախալեզուն հունարեն և լատիներեն լեզուների հետ, եզրակացնում է, որ բայի խնդիր ունենալու կարողությունը, ժամանակակից տերմինով՝ արժույթականությունը, ի հայտ է եկել լեզվի զարգացման ավելի ուշ փուլում: Հնդեվրոպականից վերցրած բազմաթիվ օրինակների օգնությամբ արագացվում է այն, որ մի բայ, բազմաթիվ անգամ կրկնվելով իր գործառության ուղղվածությունը որոշող տվյալ գոյականի հետ, կորցնում է իր իմաստային մի որոշ քանակը, և այդ գոյականի հոլովի արժեքն էլ նվազում է՝ համեմատած իր սկզբնական արժեքի հետ: Այսինքն տեղի է ունենում շարահյուսա-իմաստային առաջխաղացում՝ որն ընթանում է երկու փուլով. նախ տեղի է ունենում 2 բաղադրիչների իմաստների փոխներթափանցում, այնուհետև՝ իմաստի տարրերի փոխանցում մի բաղադրիչից մյուսը, որի ընթացքում բաղադրիչներից մեկը դառնում է գերադաս, մյուսը՝ ստորադաս:

Բառը առկայանում է խոսքում: Նրա առկայացման համար անհրաժեշտ է որոշակի կոնտեքստ, այլ կերպ ասած՝ շրջապատ: Սակայն նվազագույն կոնտեքստը հաճախ բավարար չէ բառի իմաստը առկայացնելու համար, և երբեմն պետք է լինում վերլուծել մի ամբողջ հատված՝ բառի (մասնավանդ դարձվածքի) արժույթը որոշելու համար: Մեծք արժույթականություն ենք համարում բառի հնարավոր կապերի այն պարտադիր քանակը, որն անհրաժեշտ է և բավարար տվյալ բառը խոսքում առկայացնելու համար: Տվյալ դրույթը չի բացառում որևէ բայի կամընտիր արժույթականության առկայությունը: Այդ տեսակետից արժույթականություն ունեն թողր բառերը, որոնք ունեն ինքնուրույն կառուցվածքաիմաստային նշանակություն: Բառի արժույթականությունը ունի տրամաբանական, իմաստաբանական և շարահյուսական մակարդակներ⁵: Որոշ լեզվաբաններ տարբերակում են արժույթականության չորս մակարդակ՝ հնչյունական, ձևաբանական, շարահյուսական և իմաստաբանական մակարդակներ⁶:

Տրամաբանական մակարդակում (ըստ Ս. Գ. Կացնելսոնի՝ բովանդակային արժույթ)⁷, որը վերացարկման ամենաբարձր մակարդակն է, բացահայտվում և տրամաբանորեն բացատրվում են բառի արժույթային կապերն ըստ իրենց հիմնանշանային (դեմոստատիվ) բընութագրի: Երկու մյուս մակարդակները՝ իմաստաբանական և շարահյուսական, զուտ լեզվական են: Ծարահյուսական մակարդակը ենթադրում է դատարկ տեղերի առկայություն: Այդ մասին դեռ Բրիհկմանն է գրել⁸: Նա այդ ազատ տեղերը կոչել է «*offene stelle*» (բաց տեղեր), որոնք գրավվում են շարահյուսական գործիչների կողմից: Ծարահյուսական արժույթականությունը, որն ինքը թխեցնում է իմաստայինից, կարող է լինել ֆակուլտատիվ կամ պարտադիր: Պարտադիր անելով հասկանում ենք այն անհրաժեշտ բառերի քանակը, որոնք առկայացնում են տվյալ բառը խոսքում (տվյալ իմաստում), և առանց որի բառի հասկացումը թերի է (օրինակ՝ ֆրանսերեն boire): Բառի իմաստը բյուրեղացնում է նրա արժույթային կապերը, չնայած որ բառի կապակցելիությունը նրա նշանակության միայն մի մասն է կազմում: Այս հարցում մենք լիովին համաձայն ենք Կուրբեյրայի այն կարծիքի հետ, որ շրտի կապակցելիության հասկացությունը հարաբերակցվում է կոնտեքստի հասկացությանը, եթե կոնտեքստը ընկալվում է տվյալ լեզվի քերականության նորմաներին համապատասխան

³ Տե՛ս M. Bréal. Essai de sémantique. Paris, 1904.

⁴ Տե՛ս A. Meillet. Introduction à l'étude comparative des langues indo-européennes. 1947

⁵ Տե՛ս М. В. Всеволодова. Некоторые закономерности слов и словоформ в предложении (Согласованность слов и вопросы обучения русск. языку для иностранцев. Сб. ст. под ред. В. В. Марковкина, М., «Русский язык», 1984)

Տե՛ս Н. Г. Олышанский, Աշվ. աշխատությունը:

Տե՛ս С. Д. Кацнельсон. К понятию типов валентности.—Вопросы языкознания. 1987, № 3.

⁶ Տե՛ս H. Brincmann. Die deutsche Sprache. Dassoldorf, 1971.

ճող, իր նշանակությունը ընդլայնողների հետ իմաստաբանորեն իրացվող բառի կապակցելիությունը⁹:

Բառն ամբողջական միավոր է ինչպես իր կազմով, այնպես էլ իր իմաստով: Նրա ամբողջականությունը չի խաթարվում լեզվում, ինչ իրադրության մեջ էլ այն օգտագործված լինի:

Բառն իր իմաստով, արտաքին կապերով, շարահյուսական մակարդակի տարր լինելու իր ունակությամբ չի հակադրվում դարձվածային միավորին: Չնայած որ դարձվածային միավորը իրենից ներկայացնում է բառերի կապակցություն, սակայն ոչ բոլոր բառակապակցություններն են, որ իրենց իմաստային և կառուցվածքային զարգացմամբ դառնում են դարձվածքներ: Դարձվածային միավորները առաջանում են շարահյուսական մակարդակում, երբ կապակցությունը ստանում է որոշակի իմաստությունների քանակ և համապատասխան կառուցվածքային կապ: Դարձվածային միավորը ինքնուրույն է իրեն հատուկ ներքին և արտաքին հատկանիշներով:

Բառերի նման, դարձվածքները նույնպես չեն կազմվում հնդդարյակցման գործընթացում, այլ լեզվում հանդես են գալիս որպես պատրաստի միավորներ: Այս հատկանիշով դարձվածքը մոտենում է բառին (ինչպես նաև՝ կալուն բառակապակցություններին ու բարդություններին), բայց որոշակիորեն սահմանազատվում է բառերի ազատ կապակցություններից: Բառերի նման, դարձվածքները կալուն են իրենց կազմով ու կառուցվածքով և բոլոր այն դեպքերում, երբ դարձվածքը մեկ բառի արժեք է արտահայտում, հիմնանշանային տեսակետից համարվում է համարժեք: Դարձվածքի և բառի ընդհանուր հատկանիշներից է նաև նրանց բառային իմաստ ու քերականական կարգ ունենալը: Դարձվածքի ինքնուրույն իմաստի առկայությունը հաստատվում է ոչ միայն նրանով, որ այն կարելի է քայքայել, այլ նրանով, որ դարձվածքը և բառը իրենց իմաստներով կարող են հարաբերակցվել որպես հոմանիշներ, ինչպես օրինակ՝ *casser sa pipe-mourir* և այլն: Բայց բառը լեզվի ավելի ազատ միավոր է, քան դարձվածքը: Որպես լեզվի իմաստային միավորներ, դարձվածքի, հատկապես իդիոմատիկ արտահայտության մեջ, բառ-բաղադրիչները կորցնում են իրենց անկախ, իմաստային արժեքները, դարձվածքի կազմի մեջ նրանց առկայությունը իրենց բառային իմաստով, ուրեմն և բառային արժեքով, ձևական է դառնում: Հետևաբար, դարձվածքը, իր քերականական արժեքով և հատկապես իր կառուցվածքով, չի նույնանում ոչ կալուն և ոչ էլ ազատ բառակապակցությունների հետ: Ուրեմն, դարձվածային միավորի յուրահատկությունը կայանում է նրանում, որ նշանակության գործառնությունը իրականացնում է ամբողջ միավորը, իսկ նրա առանձին բաղադրիչները գուրկ են առարկայական հարաբերությունից: Ազատ կապակցությունների արտաքին կապերը հիմնվում են իրենց բաղադրիչների արժույթային հատկությունների վրա: Մինչդեռ դարձվածաբանական միավորի, մանրավանդ իդիոմների առանձին բաղադրիչները, կորցնելով կապը իրենց դեմոտատի հետ, չեն կարող իմաստային կամ քերականական կապի մեջ մտնել ասույթի մյուս անդամների հետ: Նման հարաբերություններ կարող է ունենալ միայն նոր իմաստ ստացած ամբողջական միավորը, որն ասույթում ունի իրեն հատուկ շարահյուսական դիրքը: Դարձվածքը բառի նման ունի իր շրջապատը, ուր նա սովորյալում է: Որպես դարձվածքի շրջապատ ընդունում ենք բառերի այն խմբերը, որոնք կառուցվածքայնորեն և իմաստաբանորեն անհրաժեշտ են այդ առկայացման համար: Շրջապատի միջոցով է արտահայտվում դարձվածաբանական միավորի իմաստային ամբողջականությունը, քանի որ շրջապատը վերաբերում է ամբողջ միավորին և ոչ թե նրա առանձին բաղադրիչներին: Դարձվածաբանական միավորը, որպես այդպիսին, այս դեպքում չի հակադրվում բառին, որը նույնպես լեզվական ավարտուն, ամբողջական միավոր է, որը նույնպես ունի իրեն հատուկ շրջապատը, այլ հակադրվում է այն բառակապակցություններին, որոնց կապը ազատ ու պատահական է և որոնք չունեն իրենց հատուկ շրջապատը, ուր և առկայանում են: Դարձվածային միավորը, ի տարբերություն ազատ կապակցությունների, ունի իրեն հատուկ շրջապատը, այսինքն՝ իր սեփական կառուցվածքային քաշխուսը¹⁰:

Դարձվածքի արտաքին կառուցվածքը ելնում է ամբողջ միավորի կապակցական ճանաչողություններից, որն իր հերթին բխում է նրա իմաստից, այսինքն՝ դարձվածային միավորի իմաստը իր բաղադրիչների պարզ արտադրյալը չէ, այլ այն մի նոր որակ է, որն ունի իր սեփական իմաստային դաշտը:

Շրջապատին կապվելու դարձվածքի ունակությունը ուղղակիորեն կապված է նրա ներ-

⁹ Տե՛ս А. К. Курбцова. Сочетаемость как объект рассмотрения в курсе лексикологии (С.С. и Вопр. русск. языка).

¹⁰ Տե՛ս М. Т. Тагнев. Окружение фразеологизма и слова. — Вопросы фразеологии, вып. 178, Самарканд, 1970.

քին իմաստա-չարահյուսական կառուցվածքի հետ: Այս տեսակետից, պետք է տարբերել իրիսեմատիկ դարձվածքները միակողմանի (ունիլատերալ) դարձվածաբանական միավոր-որոնք իրենց կազմում ունենալով իր նախնական իմաստը պահպանած գոնե մեկ տարր, պահպանում են նաև իր նախատիպի արժույթային հատկությունները:

Բառերի նման դարձվածային միավորները նույնպես ունեն պարտադիր և կամընտիր (ֆակտյուլտատիվ) արժույթներ: Պարտադիր է համարվում արժույթների այն քանակը, որն անհրաժեշտ է դարձվածային միավորին՝ խոսքում առկայանալու համար, ֆակտյուլտատիվ են այն արժույթները, որոնք երկրորդական են և ոչ էական, որոնք անհրաժեշտ չեն դարձվածք-ները տվյալ իմաստով առկայացնելու համար: Բացի այս բաժանումից, որոշ լեզվաբաններ նշում են նաև արժույթականության ռեալ և պոտենցիալ հնարավորությունը¹¹: Ընդ որում, պոտենցիալ է համարվում որոշակի շրջապատում տվյալ միավորի կապակցելու ունակու-թյունը, այսինքն՝ նկատի է առնվում այն, որ դարձվածային միավորը կարող է ունենալ են-թակալական, խնդրային և պարագայական արժույթներ, այսինքն՝ կարող է ունենալ ան-դամների սահմանափակ քանակով պայմանավորված շրջապատ:

Ռեալ արժույթականությունը դարձվածաբանական միավորի կապակցելիությունն է նրա յուրաքանչյուր կոնկրետ օգտագործման ժամանակ: Հաճախ ռեալ և պոտենցիալ արժույթ-ները համընկնում են: Դարձվածային միավորների արժույթները կարող են դասակարգվել նաև հետևյալ կերպ.

1. Ակտիվ-պասիվ-համարժեք արժույթներ (առաջին 2-ը ստորադասական կապեր են, 3-րդը՝ համադասական):

2. Աջակողմյան-ձախակողմյան (ըստ արժույթային միջուկի կողմից առացված ուղղված-ծության):

3. Ներքին-արտաքին (ընդ որում, առաջինը կապն է դարձվածքի կազմի մեջ մտնող բառերի միջև, երկրորդը՝ բառի և դարձվածքի, ինչպես նաև դարձվածքի և այլ բառակա-պակցությունների միջև):

4. Պարտադիր-կամընտիր:

5. Հարակից (կոնտակտային)-հեռավոր (դիստանտային) (ըստ միջուկից ունեցած հե-ռավորության):

6. Ամփռական-միջնորդավորված¹²:

Արժույթային ներքին կապերի ուսումնասիրությունը հետաքրքրություն է ներկայացնում դարձվածային միավորների ստեղծման պատմության ուսումնասիրության համար և վերա-բերում է լեզվին: Խոսքային մակարդակում առավել կարևոր են արտաքին կապերը, քա-նի որ յուրաքանչյուր դարձվածային միավոր տվյալ կոնտեքստում բնորոշվում է միայն ի-րեն հատուկ շրջապատով, եթե կապակցելիության ոչ բոլոր աստիճաններում, այլ գոնե դրանցից մեկում: Դարձվածային միավորների արժույթականության հարցը ֆրոնտներեն լեզ-վում հիմնավորապես հետաքրքրել է նաև պրոֆ. Ա. Հ. Նազարյանին, որը սկզբում իր հոդ-վածներից մեկում¹³, ապա նաև իր ֆրանսերենի դարձվածաբանությանը Ըվիրված դասա-գրքում, անդրադառնում է այս հարցին և տարբերակում կապակցելիության չորս աստիճան՝

1. Ծարահյուսական,

2. Բառա-քերականական,

3. Բառա-իմաստաբանական,

4. Կանխենթադրության-իմաստաբանական աստիճաններ¹⁴:

Արժույթականությունը և իմաստը փոխադարձ համեմատական են, որքան կարևոր է ի-մաստը դարձվածաբանական միավորի տարբերակման համար, այնքան պակաս է նրա ար-ժույթականությունը տարբերվում սովորական բառակապակցության արժույթականությունից: Այսինքն տվյալ դարձվածային միավորն ունի նույն շրջապատը, ինչ-որ սովորական բառա-կապակցությունը: Այս դեպքում որոշակի դեր են խաղում իրավիճակն ու ինտոնացիան:

Այսպիսով, դարձվածային միավորներն ունեն իրենց հատուկ իմաստարժույթային շրջապատը, տարածական դաշտերը, որոնք նրան զատում են համապատասխան բառակա-պակցություններից: Դաշտի տարածքը փոփոխական է: Այն կապ չունի ոչ նրա նախատիպի հետ. ոչ էլ այն կազմող առանձին բառային միավորների հետ: Դաշտը, որը ստեղծվում է

¹¹ S6՝ P. B. Бажутина. О взаимодействии фразеологизма в его окружения. (Во-просы фразеологии и лексики русск. языка, том 21).

¹² S6՝ И. Г. Ольшанский, Ըշվ. աշխ.:

¹³ А. Г. Назарян. К проблеме окружения фразеологической единицы и ее со-четательных свойств. «Հանրիք Երևանի համալսարանի», 1986, № 2, էջ 56:

¹⁴ А. Г. Назарян. Фразеология современного французского языка. М., «Высшая школа», 1987.

փոփոխական բառերից, կարող է լինել ոճալ կամ պոտենցիալ, անհրաժեշտ կամ կամըն-
տիր: Դարձվածաբանական միավորի և նրան համապատասխան ազատ բառակապակցու-
թյան տարբերակումը կատարվում է չորս մակարդակով: Ընդ որում, բոլոր դարձվածաբա-
նական միավորները չեն, որ ունեն տարբերակման այդ չորս մակարդակները: Միայն մեկ
մակարդակի առկայությունն էլ բավարար է, որպեսզի տարբերակումը տեղի ունենա:

С. Г. АРУТЮНЯН—Валентность слова и валентность языка.—В данной работе рассматривается проблема валентности слова и валентности фразеологизма. Валентность слова—результат его целостности. Насколько слово целостно по смыслу, настолько оно меньше нуждается в дополнении. Внешние связи свободных словосочетаний основываются на валентности их составных частей. Отдельные члены фразеологизмов, потеряв связь со своими денотатами, не могут отдельно войти в связь с другими членами высказывания. Эта связь прямо зависит от его семантико-синтаксической структуры. Фразеологические единицы имеют собственное семантическое окружение, которое их отделяет как от отдельного слова, являющегося его синонимом, так и от свободного словосочетания—его прототипа.